շամբրած պիտի ըլլան, այլ գետին ծռած՝ սա վերջին խոտն ալ կը խածնէ. և ինչ օգուտ է ալ իրեն, խոտ մը աւելի ծամելն...

Եւ մահուան մանգաղն՝ ոչ թէ ետևնուս՝ այլ առջևնիս կը տեսնեմք, որ անխտիր կը հնձէ, և դարձեալ անտարբեր՝ մենք ալ կը քաշեմք յետին դալարին։

Անդորր ու անհոգ կը ննջես դուն։

Փռապանն թող եփէ դարձեալ հնոցին մէջ վաղուան հացն։ Վա՜ղն...։ Ո՞վ գիտէ անոր ծուխերէն քանին չի պիտի կարենան ճաշակել անկից վաղն. թերևս նոյն իսկ և զայն պատրաստողն։

Վա՜ղն. անստոյգ միջոց. վա՜ղն, երկբայելի ժամանակ։

Վա՜ղն՝ ինչպէս ծաղկի մը նիհար թերթն՝ մարմարներն ալ պիտի փշրէ, հալեցնէ։

Տեսայ տապանաքարեր, որ հազիւ մէկ դարու մէջ՝ սպիտակ գոյներնին՝ մամռագոյն դիտակացեալ են և ակոսեալ ամէն մէկ գրերն՝ երկնից իջած ցօղն ու անձրև՝ սևցուցած արատած են, անընթեռնլի դարձնելով զանոնք... Եւ պիտի գայ վաղն՝ որ բոլորովին անհետին։

*

Սակայն, հազիւ քանի մը ժամերու կեանք ունեցող մեղկ ու քնքոյշ ծաղիկ մը կամ տերև մը՝ ճմլեալ ու զօսացեալ՝ կ'ապրի գրքի մը ծալքերուն մէջ՝ յիշատակ մը ըլլալով։

Եւ այդ մատեանին մէջ պատուած չոր ծաղիկն՝ տարիներ վերջ՝ ինչպիսի՜ յիշատակներ կրնայ արթնցնել...

Ե՛ս ալ, այս վայրի ծաղիկս, գրքոյկի մը մէջ՝ մամուլին ներքև ճմլելով՝ եթէ ոչ քեզ կամ ուրիշի մը՝ այլ գոնէ ինձ համար ըլլայ՝ յիշատակ մը կը պահեմ... մինչև վաղն. վանքի աւերակներն իսկ հետք մը չի պիտի թողուն։

Etiam periere ruinœ.

Ռ. Ց. Փ.

Վերջ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

Տէր Սահակեան Հ. Ն. — Ամանակաւոր չափ և Տօքթ. Ս. Մ. Գաբրիէլեան . . . . 481
Գոտուրեան Հ. Մ. — Հայ Մամուլը տասնևհինգ տարուան մէջ (1894–1908) ա. Տաճկահայ մամուլը, բ. Ռուսահայ մամուլը . . . . 488

## ԳՐԱԿԱՆՔ

Ակուլ. — Առաջին ճերմակ մազը (բնաս.) . 497
Արուէն-Երկաթ. — Լուսինին. — Մեր կեանքը (բնաս.) . . . . . . . . 497
Եազըճեան Ստ. — Խաչը (P. Parzaneseէ) 498
— Հրեշտակը . . . . . . . 499
Տանդէ. — Յաղթանակ Քրիստոսի և պսակաւորել Տիրամօր կուսի ի յերկինս (Արք. Երգ ԻԳ. թարգմ. Հ. Գ. Վ. Նազարեթեան) . . . 500
Նազարեթեան Հ. Գ. — Մրմունջք շնորհակալեաց առ Տիրամայր ամենասուրբ Կոյսն . . 504
Տէր Սահակեան Հ. Ն. — Լամարթինի «Հրեշտակի մը անկումը» քերթուածին արևելեան ծագումը (վերջ) . . . . . . . 505
Բէկ-Ցովս. Աստուածատուր. — Եղբօր տեղ. — Վէպ Ե. Պ. Միխայլովսկիի (վերջ) . . 510
Հ. Ղևոնդ Ալիշան. — Օրագիր առժամայն ազդմանց մտաց և սրտի (1843) . . . . 518
Սիրա. — Տարոնի ջարդը (Գոլէճականի մը յուշագրութիւններէն . . . . . . 519

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՔ

Տ. Հ. Ն. — Ստէֆէնսըն (Գէորգ) . . . 525

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Ի Մահ Պօղոսի Միրաքեան. — Խոհք . . 527

# ԳԵՂՈՒՆԻ

1909ի Գեղունին իր սովորական դիրքով լոյս պիտի տեսնէ դեկտեմբերի վերջերը իբր Բացառիկ թիւ մը՝ ի նպաստ Կիլիկիոյ աղետեալներու։ Անոնք՝ որոնք իրենց թշուառ հայրենակիցներուն փոքր նպաստ մը ընելու տրամադիր են՝ իրենց ստոլին վրայ պիտի ունենան շքեղ Գեղունին, որ պիտի զարդարուի ազգային և Եւրոպացի նշանաւոր գրագէտներու յօդուածներով, համաշխարհային գեղարուեստական նկարներով, ազգային և համազգային կեանքը պատմող պատկերներով։

Գինն է՝ 50 ղահեկան, 10 ֆր. 4 ր. 2 տոլար։ (Բարակ թուղթի վրայ տպուած կ'արժէ 30 ղհ. 6 ֆր. 2,50 ր. 1,25 տ. Դիմել՝ "Bazmavep„ Venise (Italie).

digitised by A.R.A.R.@